ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ
համայնք, Հեռ. ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ, Հեռ. (010) 61 45 01
, E-mail arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

N 18
20 հունվար 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝ ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի 9-րդ մասի, Ձեզ ենք ներկայացնում Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի թիվ 1 հերթական նիստի որոշումները, էլեկտրոնային տարբերակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Բարսեղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1-Ա

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով . ***Համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1.ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ղեկավարի հաղորդումները համայնքի 2016թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին
2.ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 8-ի N63-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3.Համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների մասին
4.ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

	Կողմ -10	Դեմ -0	Ձեռնպահ -0
1.ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ			
2.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ			
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ			
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ			
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ			
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ			
9.ՎԱՐԴԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ			
10.ՖԼՈՐԱ ՄՈՒԱՔԵԼՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ա

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով,«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով:***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Ընդունել ի գիտություն ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ղեկավարի հաղորդումները համայնքի 2016թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին,համաձայն հավելվածի:

	Կողմ -10	Դեմ -0	Ձեռնպահ -0
1.ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ			
2.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ			
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ			
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ			
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ			
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ			
9.ՎԱՐԴԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ			
10.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3-Ն

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N63-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ գյուղական համայնքի վարչական տարածքում 2017թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 63-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1/որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
2.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՎԱՐԴԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
10.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով.***Համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Առինջ համայնքի ղեկավարի կողմից 2017թվականի ընթացքում կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
2.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՎԱՐԴԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
10.ՖԼՈՐԱ ՍՈՒԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Առինջ համայնքի ավագանու
2017թ. հունվարի 13-ի N4-Ա որոշման

ԿԱՐԳ
ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնքի ղեկավարի՝ (այսուհետ՝ համայնքի ղեկավար)կամավոր լիազորությունների (այսուհետ՝ լիազորություններ) իրականացման կարգը:
2. Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:Համայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են. Որոնք կարող են իրականացվել հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
3. Կամավոր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան:
4. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

<u>Պաշտպանության կազմակերպման բնագավար</u>

1)Քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեության համար -150000ՀՀ դրամ:

2) Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների և զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման համար տրամադրել դրամական օգնություն -50000-ական դրամ:

<u>Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ</u>

1)Առինջի միջնակարգ դպրոցին տրամադրել դրամաշնորհ -150000ՀՀ դրամ:

<u>Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ</u>

1)Հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման համար յուրաքանչյուր դիմող ընտանիքին տրամադրել մինչև -30000ՀՀ դրամ:

2) Ընտանիքում չորրորդ երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրել միանվագ -50000ՀՀ դրամ:

3) Թաղման ծախսերի փոխահատուցման համար տրամադրել միանվագ գումար -70000ՀՀդրամ, 100000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում հարցը քննարկել ավագանու նիստում

4) Ուսման վարձ -60000 ՀՀ դրամ, ավել գումարի դեպքում հարցը քննարկել ավագանու նիստում

5.**<u>Համայնքում քաղաքաշինության և կոմունալ</u>** տնտեսության, հողօգտագործման, գյուղատնտեսության, առողջապահության տրանսպորտի բնագավառում կամավոր լիազորություններն իրականացնել 2017թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին՝

1/մինչև 2000000 /երկու միլիոն/ դրամ պահանջվող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին:

2/2000000/երկու միլիոն/դրամից ավել գումարի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

6.Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5-Ն

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, ***Համայնքի ավագանին որոշումէ.***

1.ՀՀ Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 23-ի «Կոտայքի մարզի Առինջ համայնքի 2017թվականի բյուջեն հաստատելու մասին» N73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1/որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԱՌԱՔԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
2.ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
3.ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
4.ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
5.ԼԱՈՒՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
6.ՆԵԼԼԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
7.ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
8.ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
9.ՎԱՐԴԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
10.ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Առինջ համայնքի ավագանու
2016թ. դեկտեմբերի 8-ի թիվ 63-Ն որոշման
ՓՈՓՈԽՎԱԾ Առինջ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 13-ի թիվ3-Ն որոշման

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Առինջ համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ,

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա.չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը.

3)համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5)համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6)համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7)համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար երկու հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար երկու հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար յոթ հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ.

8)իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9)համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10)համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

11)ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա.ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ,

բ.թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

գ.սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ.այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե.դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12)համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13)համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15)համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա.3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

2. Առինջ համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ,

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ վաթսունհինգ հազար դրամ,

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ:

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել

ա.կենցաղային աղբի համար՝ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ամսեկան երկու հարյուր դրամ

բ. Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի համար՝ երկու հազար դրամ, ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տաս հազար դրամ:

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել մեկ խորանարդ մետրի համար հինգ հարյուր դրամ

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ:

3.Սույն հավելվածի 1-ին կետի 5-րդ, 7-րդ ,8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ ենթակետերում դրույքաչափերը հաշվարկվել են 0,5 գործակցի կիրառմամբ: